ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Մարտունի **5-ը սեպտեմբերի 2024 թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

2024 թվականի սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու արտահերթ նիստը: Նիստին ներկա էին ավագանու 17 անդամները: Բացակա էին՝ Տարոն Արշակյանը, Հակոբ Բարոյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Պապ Դանիելյանը, Արարատ Խաչատրյանը, Մարինա Հովեյանը, Լիանա Հովհաննիսյանը, Կարինե Հովհաննիսյանը, Արմեն Սեդրակյանը, Հակոբ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին բնակավայրերի վարչական ղեկավարները և աշխատակազմի բաժինների պետերը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 5-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի համար արտաբյուջետային միջոցների հաշիվ բացելու համաձայնություն տալու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

3) Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների (հողամասերի) սահմաններին կից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի և Ներքին Գետաշեն, Ձորագյուղ, Վարդենիկ, Լիճք բնակավայրերի բնակիչների կողմից իրենց հողամասերում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացմանը համաձայնություն տալու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչներ Էդմոն Հարությունի Գևորգյանին, Վազգեն Թորգոմի Կիրակոսյանին, Մեսրոպ Շաքրոյի Մնացականյանին և Վերին Գետաշեն բնակավայրի բնակիչ Թամարա Մերուժանի Մխիթարյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով շինություններ կառուցելու համաձայնություն տալու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում Մեսրոպ Շաքրոյի Մնացականյանի կողմից հանդիսությունների սրահի կառուցման աշխատանքների համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ արտոնություն կիրառելու մասին.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Երևանյան փողոց, թիվ 42/1 հասցեում գտնվող 05-003-0509-0046 կադաստրային ծածկագրով 0.00037 հա համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով Գագիկ Ռաֆիկի Շահումյանին տրամադրելու համաձայնություն տալու մասին.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում կրթահամալիրի կառուցման ծրագրին նախնական համաձայնություն տալու մասին.

8) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում գտնվող թվով երեսունհինգ բարդի տեսակի ծառերը հատելու համաձայնություն տալու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական սահմանների ներսում գտնվող 05-039-0664-0001 կադաստրային ծածկագրով համայնքային հողամասի վրա առկա բարդի տեսակի ծառը հատելու համաձայնություն տալու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-016-0136-0126 կադաստրային ծածկագրով 4.4602 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային

նշանակության այլ հողատեսքը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին.

11) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 30-ի №225-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրում հանդիսությունների սրահի կառուցման, ինչպես նաև Ծակքար բնակավայրի մշակույթի կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/09 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.

13) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի №260-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

14) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի արվեստի դպրոցի բակային մասում առկա թվով հինգ ծառերը հատելու համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 92-րդ հոդվածի 4-րդ մասի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Եվրոպայի խորհրդի (ԵԽ) կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում փախստականներին ընդունած համայնքներին» ծրագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար ՀՀ Գանձապետական համակարգում բացել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի համար առանձնացված արտաբյուջետային հաշիվ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017 թվականի N526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները, «Մարտունի համայնքի թիվ 1 կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 29.08.2024 թվականի թիվ 18 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով աղբատար մեքենաների անսարքության արդյունքում Մարտունի համայնքում ստեղծված սանիտարահիգիենիկ իրավիճակը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հնարապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից ընդամենը 12460.0 հազար դրամ հատկացնել համայնքի 2024 թվականի բյուջեի ֆոնդային մաս: Բյուջեի ծախսային մասում նշված գումարը հատկացնել.
   1) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» նախահաշվի 5129 հոդվածին 7960.0 հազար դրամ՝ համայնքի թիվ 1 և թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ների կարիքների համար մեքենասարքավորումներ ձեռք բերելու նպատակով.
   2) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Կեղտաջրերի հեռացում» նախահաշվի 5113 հոդվածին 4500.0 հազար դրամ՝ Մարտունի քաղաքի Նարեկացու փողոցի մի հատվածի կոյուղագծերի վերանորոգման նպատակով:
2. Տալ համաձայնություն գնման ընթացակարգերը կազմակերպել մեկ անձից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ն/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ՁՈՐԱԳՅՈՒՂ, ՎԱՐԴԵՆԻԿ, ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ

ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

   1) Ալբերտ Սեդրակի Զաքարյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 17 հասցեում գտնվող իր հասարակական կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.

   2) Մարզպետ Արմենի Դավեյանի կողմից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 8-րդ փողոց, թիվ 45 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինությունն օրինականացնելու համար.

   3) Գագիկ Հենզելի Սիրականյանի կողմից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 4-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.

   4) Վազիր Սարիբեկի Ավետիսյանի կողմից Մարտունի համայնքի Ձորագյուղ բնակավայրի 18-րդ փողոց, թիվ 10/1 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.

   5) Խաչիկ Սարիբեկի Կարապետյանի կողմից Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի 14-րդ փողոց, թիվ 25 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.

   6) Հովիկ Վարանի Մովսեսյանի կողմից Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-5 թաղամասի 2-րդ փողոց, թիվ 33 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԷԴՄՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ՎԱԶԳԵՆ ԹՈՐԳՈՄԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ, ՄԵՍՐՈՊ ՇԱՔՐՈՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԹԱՄԱՐԱ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՍԱՀՄԱՆԻՆ ԿԻՑ՝ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

   1) Էդմոն Հարությունի Գևորգյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Վանքի թաղամասի 5-րդ փողոց, թիվ 18 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել մանսարդային հարկ.

   2) Վազգեն Թորգոմի Կիրակոսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Սբ. Խաչ թաղամասի 4-րդ փողոց, թիվ 16 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել հացատուն-ավտոտնակ-անասնաշենք.

   3) Մեսրոպ Շաքրոյի Մնացականյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Վանքի թաղամասի 8-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասում կառուցել կիսանկուղային հարկով հանդիսությունների սրահ.

   4) Թամարա Մերուժանի Մխիթարյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Վերին Գետաշեն բնակավայրի Բ թաղամասի 3-րդ փողոց, թիվ 11/1 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՄԵՍՐՈՊ ՇԱՔՐՈՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում Մեսրոպ Շաքրոյի Մնացականյանի կողմից հանդիսությունների սրահի կառուցման աշխատանքների համար սահմանված տեղական տուրքի՝ շինարարության թույտվության վճարի նկատմամբ սահմանել զրոյական դրույքաչափ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 116-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 42/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0509-0046 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.00037 ՀԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳԱԳԻԿ ՌԱՖԻԿԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ 05-003-0509-0046 կադաստրային ծածկագրով հողամասն

ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի №286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի «ա» ենթակետի պահանջը և Մարտունի քաղաքի բնակիչ Գագիկ Ռաֆիկի Շահումյանի 04.07.2024 թվականի №4396-Ք դիմումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Երևանյան փողոց, թիվ 42/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-0509-0046 կադաստրային ծածկագրով 0.00037 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 90 տարի ժամկետով տրամադրել Մարտունի քաղաքի բնակիչ Գագիկ Ռաֆիկի Շահումյանին:
2. Կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի չափը սահմանել 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի №1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը, Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում կառուցվող կրթահամալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Նախնական համաձայնություն տալ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում նոր կրթահամալիր կառուցելու ծրագրին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՎՈՎ ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳ ԲԱՐԴԻ ՏԵՍԱԿԻ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ հատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում կառուցվող կրթահամալիրի շենքի անմիջապես տեղակայման հատվածում առկա և շինարարական աշխատանքների մեկնարկին խոչընդոտող թվով 35 (երեսունհինգ) ծերացած բարդի տեսակի ծառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-039-0664-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԲԱՐԴԻ ՏԵՍԱԿԻ ԾԱՌԸ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Լիճք բնակավայրի վարչական ղեկավարի 30.07.2024 թվականի №210 գրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ հատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 05-039-0664-0001 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում առկա ծերացած բարդի տեսակի ծառը, որը վնասում է Լիճք բնակավայրի Ա-6 թաղամասի 11-րդ փողոց, թիվ 1

հասցեում գտնվող, Արմեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի քարե պարիսպը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը, Արա Գասպարյանը և Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-016-0136-0126 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 4.4602 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-016-0136-0126 կադաստրային ծածկագրով 4.4602 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքը 10 (տասը) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության:
2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 11500 (տասնմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը, Արա Գասպարյանը և Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի №225-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի տարածքում գտնվող՝ պետական մարմինների և մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված շենքերն ու շինությունները՝ ներառյալ դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը (տարածքները), Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնելու համաձայնություն տալու մասին» №225-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

   «1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի տարածքում գտնվող՝ պետական մարմինների և մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված շենքերն ու շինությունները՝ ներառյալ դրանց կողմից զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը (տարածքները), նվիրաբերության պայմանագրով հանձնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը՝ համաձայն հավելվածի:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը, Արա Գասպարյանը և Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/09 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴՎԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պանաջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման 1-ին հավելվածի 58-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրում հանդիսությունների սրահի կառուցման, ինչպես նաև Ծակքար բնակավայրի մշակույթի կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/09 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ գնման պահանջը դադարելու պատճառով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը, Արա Գասպարյանը և Հայկ Ալեքսանյանը:

Չի քվեարկել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի №260-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «2024 թվականի համար

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և համայնքային հիմնարկների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» №260-Ա որոշմամբ հաստատված հավելված №35-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը, Արա Գասպարյանը և Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԲԱԿԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԹՎՈՎ ՀԻՆԳ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ հատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի արվեստի դպրոցի բակային մասում առկա թվով 5 ծառերը, որոնք խանգարում են շինարարական աշխատանքներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը, Արա Գասպարյանը և Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 125-Ա/

Ավագանու անդամներ՝

ՀԱՅԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ՕԼԳԱ ԴԱՎԹՅԱՆ

ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԽԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԱՂԱՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ
ГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ МАРТУНИ
MARTUNI MUNICIPALITY * REGION GEGHARKUNIK * REPUBLIC OF ARMENIA

Նիստն արձանագրեց՝ Սվետլանա Հովհաննիսյանը